

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Դավաթյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Գազի սակագնի բարձրացման դեպքում բնակչության անապահով խավերի պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Հարկ ենք համարում նշել, որ օրենքի նախագծի 1-ին հոդվածով սահմանված սոցիալական խմբերը՝ կենսաթոշակառուներ, ընտանեկան նպաստ ստացողներ, հաշմանդամներ և այլն, կրկնում են իրար, քանի որ հաշմանդամը կենսաթոշակառու է, իսկ ընտանեկան նպաստ ստացող ընտանիքում կարող են լինել թե տարիքային, թե հաշմանդամության, ինչպես նաև կերակրողին կորցրածի կամ այլ կենսաթոշակ ստացող անձինք: Այս առումով օրենքի նախագիծը հակասում է սոցիալական արդարության սկզբունքին, երբ նույն մարդը, որպես տարբեր սոցիալական խմբերի ներկայացուցիչ, մի քանի «փոխհատուցում» պետք է ստանա՝ երևույթ, որից Հայաստանի Հանրապետության կառավարությունը հրաժարվել է 1999 թվականին՝ առանձին

խմբի անձանց փոխհատուցման և երեխաներին տրվող տարաբնույթ նպաստներ տալու համակարգից անցում կատարելով մեկ միասնական ընտանեկան նպաստի համակարգի:

Ինչ վերաբերում է օրենքի նախագիծը 2011 թվականից ուժի մեջ մտնելուն, ապա հայտնում ենք, որ 2011 թվականի համար ընտանեկան նպաստի, կենսաթոշակի չափերը, գազի սակագնի բարձրացմամբ պայմանավորված, առանձին օրենքով կարգավորելու անհրաժեշտություն չկա, քանի որ 2011 թվականի բյուջետային գործընթացի շրջանակներում դիտարկվելու և վերահաշվարկվելու են, գազի և մնացած կոմունալ ծառայությունների սակագների փոփոխմամբ պայմանավորված, բնակչության անապահով խավերի նպաստների և կենսաթոշակների չափերը:

Հարկ է նկատի ունենալ այն, որ ներկայացված նախագիծն անդրադառնում է միայն կոմունալ ծառայություններից գազամատակարարման ծառայության դիմաց փոխհատուցման տրամադրմանը, մինչդեռ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին հայտ է ներկայացվել նաև ջրամատակարարման ծառայության սակագնի վերանայման կապակցությամբ, իսկ այլ կոմունալ ծառայությունների առավել հեռանկարային վարքագծերը տեսանելի չեն:

Ընդհանրացնելով՝ կարելի է նշել, որ կոմունալ ծառայություններից որևէ մեկի սակագնի փոփոխության դեպքում առանձին օրենքով առաջարկվող սոցիալապես առավել խոցելի խավերին աջակցելու նորմեր և մեխանիզմներ սահմանելու ձևաչափն ընդունելի չէ:

Միաժամանակ հայտնում ենք, որ 2010 թվականի ապրիլից սպասվելիք բնական գազի սակագների բարձրացման պայմաններում Հայաստանի Հանրապետության կառավարության թիրախային սոցիալական քաղաքականության հստակեցման, պետական աջակցության առավել արդյունավետ կառավարման և սակագների բարձրացման արդյունքում սոցիալապես անապահով խավերի համար հնարավոր բացասական սոցիալական հետևանքների ու գների բարձրացման ազդեցության մեղմացման միջոցառումների ծրագրի մշակման նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2010 թվականի մարտի 3-ի N 146-Ա որոշմամբ ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ, որը սահմանված կարգով Հայաստա-

նի Հանրապետության կառավարության քննարկմանն էր ներկայացրել առաջարկություններ բնական գազի սակագների բարձրացման ազդեցության մեղմացման միջոցառումների ծրագրի վերաբերյալ: Հաշվի առնելով աշխատանքային խմբի ներկայացրած առաջարկությունները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն արդեն իսկ 2010 թվականի մարտի 25-ին ընդունել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 32-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 276-Ն և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 707-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 275-Ն որոշումները, համաձայն որոնց 2010 թվականի մայիսի 1-ից ընտանեկան նպաստի միջին ամսական չափը 23500 դրամի փոխարեն կդառնա 26853 դրամ, իսկ 2010 թվականի նոյեմբերի 1-ից աշխատանքային կենսաթոշակի միջին ամսական չափը կավելանա 2852 դրամով կամ 11.1 տոկոսով:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Վարդան Արամյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**Գազի սակագնի բարձրացման դեպքում բնակչության անապահով խավերի պետական
աջակցության մասին**

Հոդված 1. Գազի սակագնի բարձրացման դեպքում՝ կենսաթոշակատուների, ընտանեկան նպաստ ստացողների, հաշմանդամների, սոցիալական հատուկ արտոնություններ եւ սոցիալական պաշտպանության այլ օժանդակության ենթակա անձանց կողմից տվյալ ծառայության համար վճարման ենթակա գումարի այն մասը, որը պայմանավորված է գազի սակագնի բարձրացմամբ, փոխհատուցվում է պետության կողմից:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ԳԱԶԻ ՍԱԿԱԳՆԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՆԱՊԱՀՈՎ ԽԱՎԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ Ե ՕՐԻՆԱԳԾԻԷ**

Օրինագծի ընդունումը պայմանավորված է գազի սակագնի բարձրացման դեպքում բնակչության սոցիալապես անապահով խավերին պետական աջակցություն ցուցաբերելու անհրաժեշտությամբ: Կառավարության համաձայնության դեպքում միանգամայն ընդունելի է նաեւ օրինագիծը 2010 թվականի հունիսի 1-ից ուժի մեջ մտնելու դրույթը: